

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5 օրերին Մայր Աթոռում տեղի ունեցան հանդիսություններ՝ նվիրված Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության 30-րդ հոբելյանական տարեդարձին:

Այս առթիվ Սուրբ Էջմիածին էին ժամանել Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներն ու թեմական պատգամավորները, ինչպես նաև բազում հրավիրյալներ և բազմահազար ուխտավորներ:

Հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչները. Վրաց Օրթոդոքս Եկեղեցու պատվիրակությունը գլխավորում էր Նորին Սրբություն Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը համայն Վրաստանի և Իմերեթիայի, ինչպես նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պատվիրակությունը, որը գլխավորում էր Տ. Ֆիլարետ միտրոպոլիտը Մինսկի և Բելոռուսիայի և Ռուս Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավարը:

Սեպտեմբերի 26-ին, հինգշաբթի օրը, Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ «Վարդանանք» գոբելեն գորգի բացման արարողությունը: Հանդիսությանը ներկա էին՝ գորգի նվիրատու տիար Մելանկտոն Արսլանյանի տիկինը՝ Վիոլետա Արսլանյանը, նրա ընտանիքի անդամները, Մայր Աթոռում գտնվող հյուր հոգևորականները, պատգամավորներն ու բազմաթիվ հյուրեր: Հանդիսության ընթացքում ելույթներ ունեցան՝ Վեհափառ Հայրապետը, գոբելենի նկարի հեղինակ տիար Գրիգոր Խանջյանը, Օբյուսոն քաղաքի գոբելենը գործող արհեստանոցի տեր և տնօրեն տիար Սլիվյե Պենտոնը ու արվեստաբան Մանյա Ղազարյանը:

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օրը, երեկոյան, Մայր տաճարում տեղի ունեցավ կիրակամտի հանդիսավոր ժամերգություն:

Սեպտեմբերի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Սուրբ պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվեց Վեհարանի գահասրահ, ուր հոգևոր դասի և խուռներամ ժողովրդի

ներկայությամբ սիրո ողջույնի խոսք ասաց Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, շնորհավորելով Նորին Սրբության գահակալության 30-ամյակը: Ապա շնորհակալական խոսք արտասանեց հոբելյար Հայրապետը՝ օրհնելով ներկա բազմությանը:

Երեկոյան ժամը 19.00-ին, Երևանի «Հրազդան» հյուրանոցի շքեղ սրահում հայ և օտար հոգևորականների, ինչպես նաև պատգամավորների պատվին տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Սեպտեմբերի 30-ին, երկուշաբթի օրը, ժամը 19.00-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի գահակալության 30-րդ տարեդարձին: Ներկա էին Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարքը, քույր Եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչները, Հայ Եկեղեցու թեմական առաջնորդները, թեմերի պատգամավորները, Մայր Աթոռի բարերարները, հայրենի մտավորականության ներկայացուցիչները և բազմաթիվ այլ հրավիրյալներ՝ շուրջ 500 հոգի:

Հանդիսությանը ներկա էին՝ Սովետական Միության Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Միխայլովիչ Խարչևը և Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ՝ տիարք Ա. Հասրաթյանը և Ռ. Զարգարյանը:

Հանդիսության բացումը կատարեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը: Ապա հանդես եկավ հոբելյար Հայրապետը իր գահակալության 30-ամյա գործունեությանը նվիրված խոսքով:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդես եկան՝ նախագահ տիար Կոնստանտին Միխայլովիչ Խարչևը, Նորին Սրբություն Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը, Նորին Սրբազնություն միտրոպոլիտ Ֆիլարետը, սփյուռքահայության կոմիտեի անունից՝ տիար Վարդգես Համազասպյանը, ՀՍՍՀ խաղաղության կոմիտեի անունից՝ ակադեմիկոս Գալուստ Գալոյանը, Մատենադարանի տնօրեն տիար Սեն Արևշատյանը:

Կյուլպենկյան հաստատության անունից իր խոսքն ասաց տիար Ռոբերտ Կյուլպենկյանը: Հանդիսության ավարտին ողջույնի և շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Կ. Պոլսի հայոց Տ. Շնորհք Պատրիարքը՝ հանուն Հայ Եկեղեցու հոգևորականության:

Հանդիսության երկրորդ բաժնում գործադրվեց գեղարվեստական ծրագիր:

Հոկտեմբերի 1-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.15-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, հայ հոգևորականությունը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, բոլոր պատգամավորներն ու հյուրերը այցելեցին Ծիծեռնակաբերդ և ծաղկեպսակներ զետեղեցին հայ նահատակաց հուշարձանին ու բոլորը միասնաբար աղոթեցին 1915 թվականի մեծ Եղեռնի զոհերի հոգիների խաղաղության համար:

Ժամը 11.30-ին Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը, հայ բարձրաստիճան հոգևորականները, ինչպես նաև թեմերի պատգամավորները, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, այցելեցին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդ, որտեղ նրանց ընդունեց նախագահ տիար Ֆադեյ Սարգսյանը, որը ջերմապես շնորհավորեց Վեհափառ Հայրապետին նրա գահակալության երեսնամյակի առիթով և ողջունեց արտասահմանից ժամանած բոլոր հայ հոգևորական ու աշխարհական հյուրերին:

Հոկտեմբերի 2-ին, չորեքշաբթի օրը, Վեհարանում տեղի ունեցավ եպիսկոպոսաց դասի խորհրդակցական հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ՝ ի գլուխ Տ. Շնորհք Սրբազան Պատրիարքի:

Հոբելյանական հանդիսությանց օրերը, որոնք տևեցին սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 5-ը, դարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար անմոռանալի և հիշատակելի օրեր:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,
6 հոկտեմբեր 1985 թ